ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆՈՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

«16» հուլիսի 2015թ.
գ. Նորակերտ

թիվ 86

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶՊԵՏ՝ ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ գյուղական համայնքի ղեկավարի 2015 թվականի հուլիսի 15-ին կայացած ժողովի հաշվետվությունը, 2015 թվականի առաջին կիսամյակում ծավալած գործունեության վերաբերյալ:

Առդիր՝ 3 թերթ

Համայնքի ղեկավար՝ Ն. Կարապետյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15 -ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԺՈՂՈՎԻ.

ՕՐԱԿԱՐԳ

ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

Զեկ. Համայնքի ղեկավար Ե. Կարապետյան

Ժողովին մասնակցում էին 42 մարդ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ գյուղական համայնքի ղեկավար Ե. **Կարապետյանը, ժողովի մասնակիցներին** հակիրճ ներկայացրեց **2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գյուղապետարանի կողմից համայնքի տարբեր ոլորտներում իրականացրած գործունեությունը, անդրադարձավ տարիներ շարունակ լուծում պահանջող առկա հիմնախնդիրներին, վեր հանեց թերություններն ու բացթողումները:**

Համայնքի ղեկավար Ե. Կարապետյանը հարկ համարեց նշել, որ տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով մեծ է չմշակվող հողատարածքների տեսակարար կշիռը, որը կազմում է շուրջ 90.0% հանգամանք, որը խիստ մտահոգիչ է և միաժամանակ **դժվարացնում է սեփական եկամուտների հավաքագրման գործնթացը:** Համայնքի ղեկավարը նախ անդրադարձավ 2015 թվականի առաջին կիսամյակում բյուջեի կատարման հիմնական ցուցանիշներին,որն առաջին կիսամյակի կտրվածքով ըստ առանձին եկամտատեսակների հետևյալ պատկերն է ներկայացնում:

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Նախատեսված / հազ. դրամ/	Փաստացի / հազ. դրամ/	կատարման %-ը
Ընդամենը սեփական եկամուտներ	6175.0	4940.5	80.0
Հողի հարկ	1350.0	666.6	49.4
Գույքահարկ	3750.0	3255.0	86.8
Տեղական տուրքեր	125.0	68.9	55.0

Համայնքի ղեկավար Ծ. Կարապետյանը նշեց,որ այս օրերին ակտիվ կերպով ընթանում են սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքները և հույս հայտնեց, որ այս տարի ևս չի խախտվի վերջին տարիներին ձևավորված դրական ավանդույթը և սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները կկատարվեն,մանավանդ որ սպասվում է պտղատու մշակաբույսերի և խաղողի բարձր բերք:

Որպես դրական միտում համայնքի ղեկավարը նշեց համայնքի «խոպան» կոչվող տեղամասում «ոռոգման համակարգերի արդիականացման» ծրագրի շրջանակներում ընթացիկ տարում սկսվող ինքնահոս ջրատարի շինարարությունը, գյուղի հարավային մի հատվածում գյուղը շրջանցող մետաղյա փակ ջրատարի շինարարությունը:

Այնուհետև համայնքի ղեկավար Ծ. Կարապետյանը հակիրճ կերպով անդրադարձավ 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գյուղապետարանի կողմից իրականացրած հիմնական աշխատանքներին:

1. Կանանց մեկամսյակի առթիվ միջոցառումների կազմակերպում գյուղապետարանի, դպրոցի և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների կին աշխատակիցների համար հանդիսությունների կազմակերպումով:
2. Մասնակցություն և նվիրատվություն դպրոցում ուսումնական տարվա ավարտի կապակցությամբ կազմակերպված տարբեր մասսայական միջոցառումներին /այբբենարանի հանդես,վերջին զանգ և այլն/:
3. Համայնքի դպրոցի տարբեր դասարանների աշակերտների մեկօրյա հանգստի կազմակերպում Հանրապետության տարբեր տեսարժան վայրերում /տրանսպորտի տրամադրում/:

4.Համայնքում բարերարի նախաձեռնությամբ կառուցված «Սուրբ Պողոս» եկեղեցու շրջակայքի բարեկարգում, ասֆալտապատում և փողոցային լուսավորության անցկացում, բացման հանդիսավոր արարողության կազմակերպում:

5. Ի ուրախություն համայնքի ազգաբնակչության համայնքի ղեկավարը նշեց, որ վերջապես իրականություն կդառնա «Նորակերտի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման աշխատանքները ,որի համար համայնքի ազգաբնակչության անունից խորին երախտագիտություն հայտնվեց Արմավիրի մարզպետարանի աշխատակիցներին և հատկապես մարզպետ Ա. Ղահրամանյանին,այդ գործում ջանքեր չխնայելու և 50.0 մլն. դրամից ավել ծրագիրը իրականություն դարձնելու համար:

6. Այնուհետև համայնքի ղեկավարը նշեց, որ չի կարող չանրադառնալ նաև այն փաստի վրա, որ վերջապես ընթացիկ տարում իրականություն կդառնա համայնքի սոցիալ տնտեսական հեռանկարային զարգացման համար խիստ կարևոր մի

փաստաթղթի՝ գլխավոր հատակագծի ձեռք բերումը , որի ուղղությամբ աշխատանքները ընթացքի մեջ են, անհրաժեշտ մոտ 8.5 մլն դրամական միջոցների հատկացման հարցերը լուծված:

7.Համայնքի սոցիալապես անապահով շուրջ 40 ընտանիքների սոցիալական օգնության է տրամադրված:

Այնուհետև համայնքի ղեկավարը նշեց, որ չնայած կատարված զգալի աշխատանքներին, այնուամենայնիվ համայնքում շատ են տարիներ շարունակ իրենց

լուծմանն սպասող խնդիրները, դրանք են՝

ա/ Ոռոգման ջրագծերի մաշվածության բարձր աստիճանը
բ/ Դպրոցում մարզադահլիճի բացակայությունը
դ/ Համայնքի մշակույթի տան և փոստային բաժանմունքի շենքի վերանորոգման հրատապությունը և այլն:

Ելույթ ունեցան նաև դպրոցի տնօրեն Վ. Քոշյանը , «Նորակերտի մանկապար – տեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Ս. Ասատրյանը, բուժ ամբուլատորիայի տնօրեն՝ բժշկուհի Հ. Աղախանյանը, որոնք իրենց խորին երախտագիտությունն արտահայտեցին գյուղապետարանի աշխատակազմին, հատկապես համայնքի ղեկավար Ծ. Կարապետյանին իրենց ղեկավարած ոլորտների հանդեպ ցուցաբերած ամենօրյա հոգատարության և նյութական ու բարոյական շարունակական աջակցության համար:

Վերջում համայնքի ղեկավար Ծ. Կարապետյանը ժողովի մասնակիցներին հավաստիացրեց, որ այսուհետ ևս ավագանու, գյուղապետարանի աշխատակազմի և անձամբ իր կողմից հնարավոր ամեն ինչ կարվի համայնքի առջև ծառացած խնդիրները մշտապես ուշադրության կենտրոնում պահելու և հնարավորինս լուծում տալու համար:

Համայնքի ղեկավար՝ Ծ. Կարապետյան

15-ը հուլիսի 2015 թվական գ. Նորակերտ